

**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՈՒԱԿ-ԲՄԱՇՁԲ-18/33**

ք. Երևան

« 02 » հուլիսի 2018թ.

«Վ. Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբնության ազգային կենտրոն» ՓԲԸ, ի դեմս տնօրեն Ա. Տանանյան-ի, որը գործում է «Վ.Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբնության ազգային կենտրոն» ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ազարակ» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Բարսեղյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Վ.Ա.Ֆանարջանի անվան ուռուցքաբնության ազգային կենտրոն ՓԲԸ-ի ճառագայթային կենտրոնի 3-րդ հարկում գտնվող տեխնիկական հարկում յոդաթերապիայի բաժնի շինարարական աշխատանքները** (նախագծա - նախահաշվային փաստաթղթերը մշակվել են ՈՒԱԿ-ԲՄԱ-18/9 ծածկագրով պայմանագրի շրջանակներում) (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը և կատարման ժամկետը սահմանվում է՝ տաս շաբաթ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 5 Հավելվածում¹:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը

¹ Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:

ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուին հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 22800000 (քսաներկու միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 3800000 (երեք միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև **2021 թվականի ապրիլի 20-ը**:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $VQ-S=UQ/LQ \times DQ \times Sx \times D$, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է².

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով³:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԱՐԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

² Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ, ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:

³ Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուի ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագրի կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:⁴

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ք. Երևան, Ֆանարյան 76 շ.
<<Արդշինբանկ >> ՓԲԸ Արաբկիր մ/6
Հ/Հ 2471202012460000
ՀՎՀՀ 01002804
էլ. հասցեն՝ nco.gnumner@gmail.com
հեռ. 010-28-77-92



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ագարակ» ԲԲԸ
ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Փարպի
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150008007517564
ՀՎՀՀ 0500386
Տնօրեն՝



⁴ Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տրամադրի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը» բառերը փոխարինելով «և» բառով:

Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՈՒԱԿ-ԲՄԱՇՁԲ-18/33 ծածկագրով 2018 թվականի հուլիսի 02-ին. կնքված պայմանագրի

ք. Երևան

02 հուլիսի 2018թ.

«Վ.Ա.Ֆանարջանի անվան ուռուցքաբնության ազգային կենտրոն» ՓԲԸ, ի դեմս տնօրեն Ա.Տանանյան-ի, որը գործում է «Վ. Ա.Ֆանարջանի անվան ուռուցքաբնության ազգային կենտրոն» ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ագարակ» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Կ.Բարսեղյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով կողմերի միջև ՈՒԱԿ-ԲՄԱՇՁԲ-18/33 ծածկագրով 2018 թվականի հուլիսի 02-ին. կնքված պայմանագրի /այսուհետ Պայմանագիր/ և 8.15 կետով սահմանված դրույթները և պահպանելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 56-րդ կետով նախատեսված պահանջները որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը /այսուհետ Համաձայնագիր/ հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1. Հետագա համագործակցության համար Կողմերը որոշեցին Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար նախատեսել ֆինանսական միջոցներ և Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1.1. Պայմանագիրը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ թիվ 3 հավելվածով (վճարման ժամանակացույց). որը շարադրված է Համաձայնագրի թիվ 1 հավելվածում.

II. Այլ պայմաններ

2. Համաձայնագիրը համարվում է Պայմանագրի անբաժանելի մաս: Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Համաձայնագրում չնշված կողմերի գնման Պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ: Համաձայնագիրը կազմված է — էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ: Համաձայնագրի թիվ 1 հավելվածը, համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ք. Երևան, Ֆանարջան 76 շ.
<<Արդշինբանկ >> ՓԲԸ Արաբկիր մ/6
Հ/Հ 2471202012460000
ՀՎՀՀ 01002804
էլ. հասցեն՝ nco.gnumner@gmail.com
հեռ. 010-28-77-92



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ագարակ» ԲԲԸ
ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Փարպի
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150008007517564
ՀՎՀՀ 0500386
Տնօրեն՝



Հավելված N 1
2018 թվականի հունիսի 02-ին՝ I համաժողովարի
Հավելված 2
հունիսի 2018-թ. կերպված
«ՈՒՆԷ-ԲՄԱՀԸԲ-18/33» ծածկագրով պայմանագրի
(հաղորդված 2018 թվականի հունիսի 02-ին՝ I համաժողովարի)

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ^{5*}

**Վ. Ա. ՖԱՆԱՐՁՅԱՆԻԱ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի
ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ 3-ՐԴ ՀԱՐԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՐԿՈՒՄ ՅՈՂԱԹԵՐԱՊԻԱՅԻ
ԲԱԺՆԻ ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

Գ/Գ	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավոր գինը	ընդամենը
1	2	3	4	5	6
	1-1. Քանդման աշխատանքներ				
	Աստիճանավանդակի ապամոնտաժման աշխատանքներ				
1	Ապամոնտաժել աստիճանավանդակի մետաղական բազրիքները, փայտե բռնածողի հետ միասին -25.7մ	մ ²	23,1	0,34	7,79
2	Փայտե դռների և պատուհանների ապամոնտաժում	մ ²	13,40	2,03	27,26
3	Մետողե դռների և պատուհանների ապամոնտաժում	մ ²	7,50	1,19	8,91
4	Քանդել դեպի տանիք բարձրացող պատուհանի շարած պատը	մ ³	0,4	7,88	2,76
5	Քանդելաստիճանի նկուղային հատվածի հատակը	մ ³	1,8	7,88	14,18
6	Մաքրել առաստաղի ներկանյութը	մ ²	202,5	0,36	73,62
7	Մաքրել պատերի ներկանյութը	մ ²	250,0	0,16	39,50
8	Մաքրել պատուհանների և դռների շեպերի ներկանյութը գաջի հետ միասին	մ ²	20,60	0,15798736	3,25
9	Քանդել փոստրակ սավառքի բազալտե եզրաքարերի համար	մ ³	0,60	0,65	0,39
10	Շին. աղբի բարձում և տեղափոխում 12կմ հեռավորության վրա	մ ³	13,20	4,90	64,62
	Տեխնիկական հարկի ապամոնտաժման աշխատանքներ				0,00
1	Ապամոնտաժել ռեմոնտի տնտեսությունների էլ մալուխները, սարքավորումները և տեղափոխել տարածքից	հատ	7	0,62	4,36
2	Ապամոնտաժել էլ. մալուխները	մ	30,0	0,13	4,00
3	Ապամոնտաժել հատակի լիմոյումը շրիշակների հետ միասին	մ ²	132,40	0,09	11,86
4	Մաքրել առաստաղի ներկանյութը	մ ²	163,2	0,36	59,34
5	Մաքրել պատերի ներկանյութը և պաստառները	մ ²	406,7	0,16	64,25
6	Մաքրել վիտրաժների, պատուհանների և դռների շեպերի ներկանյութը գաջի հետ միասին	մ ²	18,00	0,16	2,84
7	Փայտե դռների և պատուհանների ապամոնտաժում	մ ²	16,20	2,03	32,96
8	Մետողե դռներին ապամոնտաժում	մ ²	7,70	1,19	9,15
9	Ապամոնտաժել փայտաշեղային սալերով պատուհանագոգերը b=0,15մ - 4,0գծմ	մ ²	0,60	2,03	1,22
10	Ապամոնտաժել առկա միջնորմները	մ ³	2,5	7,88	19,70
11	Ապամոնտաժել փայտաշեղային սալերով սակառները խողովակները փակելու համար	մ ²	4,80	2,03	9,76
12	Ապամոնտաժել նախկին հարթ տանիքի Ի100մմ ջրահեռացման խողովակները	մ	7,2	0,29	2,07
13	Շին. աղբի բարձում և տեղափոխում 12կմ հեռավորության վրա	մ ³	17,85	4,89507696	87,38
	1-2. Շինարարական աշխատանքներ				
	Շինարարական աշխատանքներ				
1	Միջնորմի կառուցում խարամաբլոկներով 150մմ հաստությամբ	մ ³	3,0	21,19	63,56

⁵ Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:

2	Պահոցային միջնորմային պատերը հաստեցնել B15 դասի բետոնով	մ ³	3,50	43,74	153,09
3	Բետոնով անցքերի փակում միջնապատերում և տանիքում B15 դասի բետոնով	մ ³	0,30	43,74	13,12
4	Բացվածքների շարում խարամաքլոկներով 200մմ հաստությամբ	մ ³	1,1	19,64	21,61
5	Առաստաղի ծեփամածկում և ներկում լատեքսային ներկով	մ ²	163,2	1,50	244,61
6	Պատերի գաջե սվաղում	մ ²	80,5	2,09	168,44
7	Պատուհանների և դռների շեփերի նաև պլաստիկից պատուհանագոգերի տակ գաջե սվաղի իրականացում	մ ²	18,00	5,09	91,58
8	Պատերի ծեփամածկում և ներկում ակրիլային ներկով, շեփերի հետ միասին	մ ²	406,7	1,75967556	715,66
9	Կերամոգրամիտե շրիշակների տեղադրում h=10սմ L=62.5մ	մ ²	6,3	9,95	62,19
10	Նախատեսել պլաստիկե շրիշակներ h=7սմ	մ	18,4	0,68	12,43
11	Սանհանգույցների և վաղարանների հատվածի սվաղում ցեմենտավազային շաղախով	մ ²	4,5	1,65	7,42
12	Սանհանգույցների և ցնցուղարանի պատերը սվաղել ցեմենտավազային շաղախով	մ ²	60,0	1,65	98,89
13	Նույնի երեսապատում հախճասալով, նախապես հարթեցված ցեմենտավազային սվաղի վրա	մ ²	60,0	5,74	344,20
14	Սանիտարական խողովակները փակել գիպսասովաբաթղթով	մ ²	9,00	2,64	23,75
15	Ուղղորդ պրոֆիլ - թերմոսալիկ UW 50x40	գմ	15,0	0,74	11,04
16	Չեմակի պրոֆիլ CW 50x50	գմ	39,0	0,85	33,11
17	Պատուհաններին տեղադրել պլաստիկ պատուհանագոգեր (b=3սմ)	մ	4,5	3,40	15,28
18	Պատուհանների պատուհանագոգերը դրսի կողմից սվաղել 2սմ հաստությամբ ցեմ/ավազային շաղախով	մ ²	0,5	2,16	1,08
19	Ջեռուցման մարտկոցները փակել լամինացված վահաններով	մ ²	4,0	4,90	19,59
20	Ջեռուցման մարտկոցները և խողովակները ներկել յուղաներկով պատերի համապատասխան գույնի	մ ²	12,5	0,73	9,18
	Աստիճանավանդակ և մուտքի հարթակը				0,00
1	Գլխավոր մուտքի հարթակի կառուցում հիմքերի հետ միասին B15 դասի բետոնով	մ ³	1,0	42,52	42,52
2	Մուտքի հարթակի երեսապատում բազալտե սալիկներով d=30մմ	մ ²	2,25	23,35	52,53
3	Բետոնե հարթակի և աստճանի կառուցում B15 դասի բետոնով	մ ³	1,50	58,07	87,10
4	Առաստաղի ծեփամածկում և ներկում լատեքսային ներկով	մ ²	202,5	1,50	303,52
5	Պատերի գաջե սվաղում	մ ²	50,0	2,09	104,62
6	Վիտրաժների, պատուհանների և դռների շեփերի նաև պլաստիկից պատուհանագոգերի տակ գաջե սվաղի իրականացում	մ ²	20,60	5,09	104,81
7	Պատերի ծեփամածկում և ներկում ակրիլային ներկով, շեփերի հետ միասին	մ ²	270,6	1,76	476,17
8	Կերամոգրամիտե շրիշակների տեղադրում h=10սմ L=90.0մ	մ ²	9,0	9,95	89,56
9	Աստիճանները և հարթակը երեսպատել արհեստական գրանիտով	մ ²	90,0	18,10	1628,73
10	Աստիճանների անկյունային մասում տեղադրել այլումինե անկյունակներ	մ	104,00	0,57	58,86
11	Աստիճանների վրա տեղադրել այլումինե ճաղաշար և բռնածող այլումինե խողովակներից	մ	30,00	25,07	752,22
12	Նոր բազալտե եզրաքարերի կառուցում 150x300 մմ չափերի բետոնե հիմքի վրա (B15 դասի)	մ	15,4	10,34	159,21
13	Բետոնի հիմքերի իրականացում B15 դասի բետոնով	մ ³	1,0	42,52	42,52
14	Ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում h=5սմ հաստությամբ	մ ²	55,0	4,64	255,01
15	Խճային շերտի իրականացում h=15սմ	մ ²	55,0	1,33	73,22
16	Սալվածքի աստիճանների երեսապատում բազալտե սալիկներով d=30մմ	մ ²	3,5	23,35	81,72
17	Չեմատերի սվաղում ցեմ/ավազային սվաղով մետաղական ցանցի վրա	մ ²	24,5	1,70	41,62
18	Բազալտե գլխադիրի տեղադրում h=50մմ b=350մմ L=27.2մ	մ ²	9,5	20,5855536	195,97

	Մուտքի բարձակի երեսապատում				0,00
1	Մետաղական կարկասի իրականացում ուղղանկյուն խողովակից	տ	0,052	99,47	5,18
2	խողովակ 20x2	մ	20,0	0,54	10,74
3	խողովակ 30x2	մ	18,0	0,82	14,70
4	Մուտքի բարձակը երեսապատել դարչնագույն գույնի այլուկաբոնդով	մ ²	5,0	17,27	86,37
5	Ցինկապատ հարթ թիթեղից ծածկույթ 0,55մմ հաստությամբ	մ ²	2,00	3,85	7,71
6	Ցինկապատ հարթ թիթեղից գոգնոցի և ճոռի իրականացում	մ ²	8,0	3,87	30,95
7	Ձագարների տեղադրում Ի100մմ	հատ	1	4,94	4,94
8	Ջրիոս խողովակների տեղադրում Ի100մմ 6հատ	մ	2,5	2,18	5,44
	1-3. Դռներ, պատուհաններ և հատակներ				
	Արտաքին դռներ				
1	Այլումինե կրկնաշերտ ապակեփաթեթով ջերմակամրջակով	մ ²	3,20	67,44	215,81
	Ներքին դռներ				0,00
1	Այլումինե կրկնաշերտ ապակեփաթեթով ջերմակամրջակով	մ ²	8,20	67,44	553,01
2	Այլումինե առանց ապակեփաթեթի ջերմակամրջակով	մ ²	3,10	67,44	209,06
3	Այլումինե կրկնակի լիցքով, կապարի շերտով, ջերմակամրջակով	մ ²	12,50	90,00	1125,00
4	Մետաղապլաստե դռների տեղադրում, կրկնաշերտ ապակեփաթեթով	մ ²	2,00	39,60	79,20
5	Մետաղապլաստե դռների տեղադրում, առանց ապակեփաթեթի	մ ²	4,6	32,20	148,12
	Պատուհաններ				0,00
1	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, բացվող կրկնաշերտ ապակեփաթեթով	մ ²	8,60	35,00	301,00
2	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում, չբացվող կրկնաշերտ ապակեփաթեթով	մ ²	5,40	23,75	128,25
3	Մետաղական ճաղաչարի իրականացում	տ	0,051	551,26	28,29
	Հատակներ				0,00
1	Հատակների տակ ցեմենտավազային հարթեցնող շերտի պատրաստում 30մմ հաստության	մ ²	10,0	1,22	12,20
2	Ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումի մածիկով	մ ²	10,0	1,66	16,58
3	Հատակների պատրաստում խեցեսալերով , սոսնձի վրա	մ ²	10,0	7,23	72,35
4	Հատակների տակ ցեմենտավազային հարթեցնող շերտի պատրաստում 30մմ հաստության	մ ²	47,5	1,22	57,97
5	Կերամոգրամիտե սալիկների իրականացում h=10սմ	մ ²	47,5	9,95	472,68
6	Հատակների տակ ցեմենտավազային հարթեցնող շերտի պատրաստում 30մմ հաստության	մ ²	19,0	1,22	23,19
7	Լամինատե հատակի կառուցում (մերառյալ պառալոնը)	մ ²	19,00	4,49	85,24
8	Հատակների տակ ցեմենտավազային հարթեցնող շերտի պատրաստում 30մմ հաստության	մ ²	75,5	1,22	92,14
9	Վինիլային հատակի պատրաստում ակրիլ հիմքով, սոսնձի վրա, ծ=3 մմ հաստության	մ ²	75,5	15,60	1177,80
	1-4. Ջրամատակարարում, Ջրահեռացում				
	Սառը և տաք ջրամատակարարում				
1	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում Φ20, PN16 փորձարկումով	մ	40,0	2,55	101,99
2	Փականի տեղադրում DN15	հատ	23	3,65	83,97
3	ճկուն խողովակ զուգարանակոնքի լվացման տակառիկի համար d=15, L=0.5մ	հատ	3	1,70	5,09
4	Լվացարանի ծորակ խառնարանով (հատուկ)	հատ	5	10,10	50,52

5	Ծավալային էլեկտրական ջրատաքացուցիչ V=75լ	հատ	4	63,55	254,18
6	Համակարգի լվացում և ախտահանում	մ	40	0,07	2,62
7	Պոլիպրոպիլենե խողովակների ռետինե ջերմամեկուսացում $\Phi 32$	մ	40,0	0,30	12,06
8	Ոչ ստացիոնար ցնցուղ խառնարանով (հատուկ)	հատ	4	18,03	72,11
	Ներքին ջրահեռացում				0,00
1	Պոլիէթիլենային խողովակների տեղադրում $\Phi=110$, ռետինե սեղմիչ օղակներով փորձարկումով	մ	60,0	2,43	145,62
2	Պոլիէթիլենային խողովակների տեղադրում $\Phi=50$, ռետինե սեղմիչ օղակներով փորձարկումով	մ	30,0	1,37	41,15
3	Պոլիէթիլենային խողովակների ձևավոր մասեր $d=50$ մմ	հատ	25	1,36	33,96
4	Պոլիէթիլենային խողովակների ձևավոր մասեր $d=110$ մմ	հատ	30	2,26	67,92
5	Մաքրիչ $d=100$ մմ	հատ	4	2,26	9,06
6	Ուղղանկյուն խեցե լվացարան շշածն սիֆոնով (հատուկ)	կ-տ	5	15,87	79,36
7	Զուգարանակոնք թեք թողարկով ցածր տեղակայքով լվացման տակառիկով (հատուկ)	կ-տ	3	22,59	67,76
8	Հոսակ $d=50$ մմ	հատ	3	1,80	5,40
	Արտաքին ջրահեռացում				0,00
1	Խրամուղու մշակում IV կարգի բնահողերում	մ ³	36,0	0,649554208	23,38
2	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում հեմարանների համար	մ ³	1,4	4,27	5,98
3	Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում	մ ³	4,5	3,38	15,21
4	Պոլիէթիլենային խողովակների տեղադրում $\Phi=110$, ռետինե սեղմիչ օղակներով փորձարկումով	մ	20,0	2,43	48,54
5	Փոսորակի հետադարձ լիցք մշակված բնահողերից, տոփանումով	մ ³	19,0	0,31	5,96
6	Ավելցուկային բնահողի տեղափոխում 12կմ հեռավորության վրա	մ ³	7,00	4,90	34,27
	Կոյուղու հոր				0,00
1	Բետոնե նախապատրաստական շերտի կառուցում B7.5 դասի բետոնով	մ ³	0,60	29,90	17,94
2	Միաձույլ հատակի սալի կառուցում B12.5 դասի բետոնով	մ ³	1,35	33,74	45,54
3	Միաձույլ բետոնից պատերի կառուցում B12.5 դասի բետոնով	մ ³	5,20	55,89	290,64
4	Ծածկի սալի իրականացում B15 դասի բետոնով, ամրանների տեղադրումով	մ ³	0,60	56,12	33,67
5	Ամրան AIII դասի	կգ	137,0	0,40	54,28
6	Ստոցի կառուցում B15 դասի բետոնով, ամրանների տեղադրումով	մ ³	0,30	79,24	23,77
7	Ամրան AIII դասի	կգ	25,7	0,40	10,18
8	Պողպատե խողովակ $\Phi 150$ L=2,0մ, տեղադրումով	կգ	29,00	0,66	19,05
9	Պողպատե խողովակ $\Phi 200$ L=0.5մ, տեղադրումով	կգ	13,0	0,66	8,54
10	Հորի թուջե կափարիչ T տիպի	հատ	1	50,94	50,94
	1-5. Օդափոխություն ներածման համակարգ				
	Ներածման համակարգ Ն-1				
1	Օդափոխության ներածման ագրեգատ TA-650EL Էլեկտրական օդատաքացուցիչ 8.3ԿՎՏ Օդահավաքիչ ճաղաշար EFD200 Օդահավաքիչ ճաղաշար ITA 200 Ջրային ապահովիչ 4ԿՎՏ -CWK200 Աղմկախլացուցիչ LDC 200 Թայմեր T120 Ֆիլտր EU-3 Ֆիլտր EU-10 Ճկուն ներդիր $d=200$ Օդամուղ L=650մ ² /ժամ	կ-տ	1	1698,00	1698,00

	Ավտոմատ կառավարման համակարգ համապատասխան տվյալներով և ղեկավարման վահանակով				
2	Ներածման ագրեգատների օդի հովացման արտաքին բլոկ 10ԿՎտ	կ-տ	1	292,78	292,78
3	Օդատար ցինկապատ թիթեղից d=0,5մմ տեղադրումով 150x150 16մ	մ ²	9,6	4,66	44,70
4	Օդատար ցինկապատ թիթեղից d=0,5մմ տեղադրումով 200x150 7մ	մ ²	4,9	4,66	22,82
5	Օդատար ցինկապատ թիթեղից d=0,5մմ տեղադրումով d= 200մմ-10մ	մ ²	6,3	4,66	29,24
6	Օդափոխության կարգավորող ճաղաշար 300x100	հատ	12	8,61	103,34
Ներածման համակարգ Ն-2					
1	Օդափոխության ներածման ագրեգատ TA-450EL Էլեկտրական օդատաքացուցիչ 6.0ԿՎՏ Օդահավաքիչ ճաղաշար EFD200 Օդահավաքիչ ճաղաշար ITA 200 Ջրային ապահովիչ 4ԿՎՏ -CWK200 Աղմկախլացուցիչ LDC 200 Թայմեր T120 Ֆիլտր EU-3 Ֆիլտր EU-10 Ճկուն Ներդիր d=200 Օդամուղ L=450մ ³ /ժամ Ավտոմատ կառավարման համակարգ համապատասխան տվյալներով և ղեկավարման վահանակով	կ-տ	1	1584,80	1584,80
2	Օդատար ցինկապատ թիթեղից d=0,5մմ տեղադրումով 150x150 12մ	մ ²	7,2	4,66	33,52
3	Օդատար ցինկապատ թիթեղից d=0,5մմ տեղադրումով d= 200մմ-8մ	մ ²	5,0	4,66	23,39
4	Օդափոխության կարգավորող ճաղաշար 300x100	հատ	7	8,61	60,28
1-6. Օդափոխություն արտածման համակարգ					
Արտածման համակարգ Ա-1, Ա-3					
1	Կանալային օդափոխիչ L=550մ ³ /ժամ	կ-տ	1	72,88	72,88
2	Կանալային օդափոխիչ L=260մ ³ /ժամ	կ-տ	1	44,58	44,58
3	Օդատար ցինկապատ թիթեղից d=0,5մմ տեղադրումով 150x150 15մ	մ ²	9,0	4,66	41,91
4	Օդատար ցինկապատ թիթեղից d=0,5մմ տեղադրումով d= 200մմ-10մ	մ ²	6,3	4,66	29,24
5	Օդատար ցինկապատ թիթեղից d=0,5մմ տեղադրումով d= 150մմ-10մ	մ ²	4,7	4,66	21,93
6	Աղմկախլացուցիչ LDC 200	հատ	1	31,36	31,36
7	Աղմկախլացուցիչ LDC 150	հատ	1	23,44	23,44
